ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/84

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հրավերի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.09.2021թ.-ին:

16.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/84 համարի ծածկագիրը:

29.09.2021թ.-ին և 15.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.10.2021թ.-ին:

2. **<u>«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ն 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է՝ 02.09.2021թ., ժամը 15:19:00:

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78 ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 13.10.2021թ. ժամը 10:00-ը:

Ընթացակարգի Հրավերի համաձայն գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել էինք՝ Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78 ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 13.10.2021թ. ժամը 10:00-ը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր փաստերը.

Ընթացակարգի Հրավերի տեխնիկական-բնութագրով սահմանվել են այնպիսի պահանջներ և աշխատանքներ, որոնք անհնար են իրականացնել 35-օրյա ժամկետում, մասնավորապես՝

- Երկաթբետոնե կոնստրուկցիաների ապամոնտաժումը և ավտոմեքենաներ վրա բարձումը (պահեստային տարածք տեղափոխելու համար) ի թիվս այլ տեխնիկական միջոցների՝ պետք է կատարվի վերամբարձ կռունկով: Տվյալ տարածքում միաժամանակ կարող է աշխատել առավելագույնը երեք հատ վերամբարձ կռունկ: Միաժամանակ 3 հատ վերամբարձ կռունկի առկայության դեպքում միայն ե/բ կոնստրուկցիաների (ֆերմա) ապամոնտաժումը և պահեստ տեղափոխումը կտևի 50-60 աշխատանքային օր:

- Բացի ֆերմաների ապամոնտաժումից և տեղափոխումից պետք է կատարվի նաև շին. աղբի բարձման և տեղափոխման աշխատանքներ, որի համար պետք է օգտագործվի մասնավորապես էքսկավատորներ, քարջարդիչ հիդրոմուրճ, բեռնաբարձիչներ, բեռնատար մեքենաներ և այլն:

- Նշված բոլոր տեխնիկաները միաժամանակ (զուգահեռ) չեն կարող օգտագործվել նույն տարածքում, այսինքն՝ միաժամանակ չեն կարող իրականացվել և ե/բ ֆերմաների քանդում ու տեղափոխում, և շին. աղբի բարձում ու տեղափոխում, քանի որ այդ տարածքում նշված տեխնիկաների միաժամանակյա օգտագործումը հնարավորություն չի տալիս պահպանել տեխնիկական անվտանգության կանոնները և կարող է լուրջ վտանգ առաջացնել մարդկանց (մասնավորապես այդ տարածքում աշխատողների) կյանքի ու առողջության համար, հետևաբար շին. աղբի բարձման և տեղափոխման աշխատանքները պետք է կատարել ե/բ կոնստրուկցիաների ապամոնտաժման աշխատանքներից տարբեվող օրերին:

- Շին. աղբի բարձման և տեղափոխման աշխատանքները իր հերթին կտևի մոտ 30 աշխատանքային օր:

Այսինքն՝ մրցույթով նախատեսված աշխատանքները ավարտելու համար պահանջվում է մոտ 90 /60+30/ աշխատանքային օր, սակայն մրցույթի հրավերով նախատեսված է ընդամենը 35 օրացուցային օր:

Գտնում ենք, որ Ընթացակարգի Հրավերում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ, այն է՝ երկարաձգել աշխատանքների կատարման ժամկետները կամ նշված շինությունները քանդել և ամբողջը տեղափոխել որպես շին. աղբ (այսինքն պիտանի ե/բ կոնստրուկցիաները նույնպես քանդել և տեղափոխել որպես շինաղբ), որի դեպքում հնարավոր կլինի աշխատանքը կատարել մրցույթով սահմանված 35 օրում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հրավերի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15060-2021 գրությամբ դիմել Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով

«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 29.09.2021թ.-ի թիվ 02/61-118009 գրությամբ ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում գտնվող ԳԲՔԱ-ԼՕ-2021/84 գործով «Ար-Գի Քոնստրաքշն» ՍՊ ընկերության կողմից 15.09.2021 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պահանջի համաձայն՝ «Կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում»: Երևանի քաղաքապետարանը՝ Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի համաձայն, նշված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանել 60 օր, այլ ոչ թե բողոքաբերի կողմից նշված 35 օր:

Ինչ վերաբերում է բողոքում ներկայացված այն պնդմանը, որ տվյալ աշխատանքները հնարավոր չէ իրականացնել բողոքաբերի կողմից նշված ժամկետում, ապա այն կրում է սուբյեկտի կարծիք՝ չունենալով որևէ հիմնավորում:

Ելնելով վերոգրյալից հստակ պարզ է դառնում, որ բողոքաբերի բողոքը չունի որևէ իրավական հիմք և ուղղված է խոչընդոտելու Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված գնման ընթացակարգը:

Վերոգրյալով պայմանավորված՝ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված մրցույթը կազմակերպվել է գնումների օրենսդրությանը համապատասխան՝ խնդրում ենք գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊ ընկերության ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքներ ձեռքբերման նպատակով 02.09.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի նախագծի հավելված 2-ով նախատեսված օրացուցային գրաֆիկի (այսուհետ նաև՝ Հավելված 2) համաձայն՝ սահմանվել է, որ պայմանագիրը (ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո կնքվելիք համաձայնագիրը) օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանգիրը (ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո կնքվելիք համաձայնագիրը) վավերացնելու օրվանից, իսկ աշխատանքների կատարման համար սահմանվել է 60 օրացուցային օր ժամկետ:

iii. Նույն նախագծի 8.8-րդ կետի համաձայն՝ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված

ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող աշխատանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ն 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Երևան քաղաքի Ջրվեժի ավտոկայանատեղիի և ենթակառուցվածքների քանդման և ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին հրավերի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն, քանի որ հրավերով սահմանված աշխատանքները ավարտելու համար Ընկերությանը անհրաժեշտ է մոտ 90/60+30/ օր, սակայն հրավերով սահմանվել է 35 օր:

Սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից 02.09.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 2-ով աշխատանքների կատարման համար սահմանվել է 60 օրացուցային օր ժամկետ, իսկ պայմանագրի նախագծով նաև նախատեսված է աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգման հնարավորություն՝ 30 օրացուցային օրով:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի հրավերի աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետների պահանջները, ըստ էության, նույնանում են Ընկերության կողմից բողոքով ներկայացված ժամկետների պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ուստի և մերժման ենթակա, հաշվի առնելով այն, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/78» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջները, ըստ էության, համապատասխանում են բողոքաբերի բողոքով ներկայացված պահանջին, որպիսի պայմաններում բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ար-Դի Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/84 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**